ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ԿՈՆՔԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄՆԵՐ

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

Ի՞ՆՉ Է ԿՈՆՔԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄԸ

Կոնքի օրգանների իջեցման ժամանակ օրգաններից մեկն արտանկվում է դեպի հեշտոց կամ նրա սահմաններից դուրս: Կոնքի օրգաններն են միզապարկը, արգանդը, հեշտոցը և աղիները:



ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Կոնքի օրգանների իջեցումն առաջանում է կապանների, մկանների և փակեղների թուլացման հետևանքով:

Ռիսկի գործոնները

1. Հղիությունը և ծննդաբերությունը կոնքի օրգանների իջեցման առաջացման գլխավոր պատճառներից են: Կոնքի օրգանների իջեցում դիտվում է ծննդաբերած կանանցից ամեն երրորդի մոտ: Իջեցումը կարող է առաջանալ ծննդաբերությունից անմիջապես հետո կամ տարիներ անց դրսևորվել:

   Կոնքի օրգանների իջեցում ունեցող 9 կանանցից միայն մեկը կարող է վիրահատական միջամտության կարիք ունենալ:

2. Դաշտանադադարը և տարիքը նույնպես ռիսկի գործոն են, քանի որ կարող է կապանների մկանների և փակեղների թուլացում առաջանալ:
3. Ճարպակալում, քրոնիկ փորկապություններ, ծանր ֆիզիկական աշխատանք. այս խնդիրները նպաստում են ներորովայնային ճնշման բարձրացմանը և կապանների, մկանների ու փակեղների թուլացմանը:
4. Կապանային համակարգի հետ կապված հիվանդությունները կարող են կապանների թուլություն առաջացնել, (օրինակ Մարֆանի, Էթերս–Դանլոսի սինդրոմները):

Կոնքի օրգանների իջեցման նշանները՝

- Ցավեր աճուկային շրջանում,
- Դիսկոմֆորտի զգացողություն հեշտոցում,
- Գոյացության առկայություն հեշտոցում կամ դրա սահմաններից դուրս,
- Դիսկոմֆորտ սեռական հարաբերությունների ընթացքում,
- Անմիզապահություն, հաճախամիզություն կամ դժվարամիզություն,
- Փորկապություններ կամ անկղապահություն:

Իջեցման տեսակները՝

- Հեշտոցի առաջային պատի իջեցում՝ իջնում է միզապարկը կամ միզուկը:
- Հեշտոցի հետին պատի իջեցում՝ իջնում են աղիները:
- Արգանդի իջեցում կամ եթե կինը ունեցել է արգանդի հեռացման վիրահատություն՝ կարող է իջնել հեշտոցի կճատը:

ԱՐԴՅՈ՞Ք ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ԿՈՆՔԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄԸ

Կանանց 40%-ը առնչվում է կոնքի օրգանների իջեցման խնդիրների հետ: Հաճախ, եթե կինը չի նշում գանգատներ, միջամտության կարիք կարող է չլինել:

Եթե իջեցումը կնոջն անհանգստացնում է, ապա անպայման պետք է դիմել մասնագետի, հետազոտվել և գնահատել խնդրի լրջությունը:



ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԵՎ ԿՈՆՔԻ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄՆԵՐ

Սեռական կյանքն արգելված չէ իջեցումների դեպքում: Եթե ցավեր չկան, կինը կարող է պահպանել սեռական ակտիվությունը:

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Իջեցումը հակացուցում չէ հղիության և ծննդաբերության համար: Եթե իջեցումն արտահայտված է, ապա պետք է դիմել մասնագետի, հետազոտվել և հետո միայն հղիություն պլանավորել:

ԲՈՒԺՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հսկողություն. Եթե իջեցումը չի անհանգստացնում կնոջը, ապա լիովին բավարար են հսկողության նպատակով իրականացվող պարբերական այցերը մասնագետին:

Կոնքի օրգանների վարժություններ (Կեգելի վարժություններ). Վարժությունների կատարման տեխնիկան բացատրվում է բժիշկի կողմից, ապա կինը կատարում է այն տնային պայմաններում:

Պեսարիաների տեղադրում. Պեսարիաները հատուկ օղեր են, որոնք տեղադրվում են կոնքի օրգանների իջեցման ժամանակ և շտկում են իջեցումն ամբողջությամբ: Կինն ինքնուրույն կարող է հանել օղը, լվանալ և նորից տեղադրել:

Վիրահատական բուժում. Միջամտության այս տեսակի ընտրությունը պայմանավորված է իջեցման աստիճանով, կնոջ տարիքով և հետագա ծննդաբերական պլանների առկայությամբ: Շատ ցանկալի է վիրահատությունն իրականացնել պլանավորված ծննդաբերություններից հետո: